

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՑԱՄԱԲՈՒՐԴԱՅԻՆ (ԴՐԵՆԱԺԱՅԻՆ)  
ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Արարատյան հարթավայրի ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման, ցամաքորդներում (դրենաժներում) ջրի մակարդակի և հարակից տարածքների գրունտային ջրերի բարձրացման, հողերի գերխոնավեցման, բնակավայրերի ջրակալման, հողերի աղակալման և ալկալիացման, տարափոխիկ հիվանդությունների կանխարգելման նպատակով սույն կարգով (այսուհետ՝ կարգ) նախատեսվում է իրականացնել ցամաքորդային (դրենաժային) համակարգերի միջոցով ջրի փոխադրման ծառայությունների մատուցումը:

2. Կարգում օգտագործվող հասկացություններն ունեն հետևյալ իմաստները՝

1) *ցամաքորդային (դրենաժային) համակարգեր*՝ գրունտային ջրերի մակարդակն իջեցնող և դրանց հեռացման համար անցկացվող բաց ջրանցքների, փակ ցամաքորդների (դրենաժների), չորացման հողերի և համապատասխան ՀՏԿ-ների համակարգ.

2) *ցամաքորդային ջրեր*՝ հողերի ցամաքեցման (գրունտային ջրերի մակարդակի իջեցման) հետևանքով ցամաքորդային ջրահեռացման համակարգ ներթափանցած ջրեր.

3) *ցամաքորդային (դրենաժային) համակարգերից օգտվող (այսուհետ՝ օգտվող)*՝ իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որն իր կողմից օգտագործված ջրերը պայմանագրային հիմունքներով փոխադրում է ցամաքորդային (դրենաժային) համակարգեր.

4) *հեղադարձ ջրեր*՝ օգտագործված ջրեր, որոնք հեռացվում են ջրընդունիչ՝ դրենաժային համակարգերի միջոցով.

5) *հետադարձ ջուր փոխադրող*՝ ցամաքուրդային (դրենաժային) համակարգեր շահագործող իրավաբանական անձ.

6) *շահագործող*՝ ընկերություն, որը շահագործում, սպասարկում և պահպանում է իր հաշվեկշռում հաշվառված ցամաքուրդային (դրենաժային) համակարգերը.

7) *ջրթափ*՝ օգտվողի կողմից հետադարձ ջրերը ցամաքուրդային (դրենաժային) համակարգեր լցնելու կետը:

3. Կարգը կարգավորում է ցամաքուրդային (դրենաժային) համակարգերով հետադարձ ջրի փոխադրումն իրականացնելու պայմանները:

4. Կարգով սահմանվում է ջրթափի միջոցով ցամաքուրդի (դրենաժի) մեջ փոխադրված հետադարձ ջրերի անխափան փոխադրումը՝ իրականացնելով այդ ցամաքուրդի (դրենաժի) անհրաժեշտ ծավալներով մաքրման, նորոգման և պահպանման աշխատանքները:

5. Ցամաքուրդային (դրենաժային) համակարգերից օգտվելու դեպքում կնքվում է սույն որոշման N 2 հավելվածով նախատեսված օրինակելի պայմանագիրը:

6. Ցամաքուրդային (դրենաժային) համակարգերից օգտվելու ծառայություններն իրականացվում են պայմանագրային հիմունքներով, և մատուցված ծառայությունների համար սահմանվում է վճար:

## 2. ՑԱՄԱՔՈՒՐԴԱՅԻՆ (ԴՐԵՆԱԺԱՅԻՆ) ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

7. Կանոններով սահմանվում են Արարատյան արտեզյան ավազանի ստորերկրյա ջրերի օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու, պաշարները խնայողաբար օգտագործելու, ռոտզելի հողերի մելիորատիվ վիճակը բարելավելու նպատակով ցամաքուրդային (դրենաժային) համակարգերից օգտվելու պայմանները (այսուհետ՝ պայմաններ):

8. Հետադարձ ջուր փոխադրողը սույն որոշման N 2 հավելվածով հաստատված օրինակելի պայմանագրի դրույթներին համապատասխան մատուցում է ծառայություններ:

9. Հետադարձ ջուր փոխադրողը պարտավոր է ջրը նդունումից հետո ապահովել ցամաքուրդի (դրենաժի) բնականոն ընթացքը:

10. Հետադարձ ջուր փոխադրողը պարտավոր է յուրաքանչյուր տարի, առնվազն մեկ անգամ ցամաքուրդի (դրենաժի) մեջ արտանետվող հետադարձ ջրերի կենսաբանաքիմիական կազմի լաբորատոր հետազոտություն իրականացնել:

11. Ցամաքուրդային (դրենաժային) համակարգերի միջոցով փոխադրված հետադարձ ջրերը ենթակա են հաշվառման օգտվողի կողմից տեղադրված և շահագործող կազմակերպության կողմից կապարակնքված ջրաչափական սարքի (սարքերի) ցուցմունքին համապատասխան: Ջրաչափական սարքի խափանման և (կամ) բացակայության դեպքում արտանետվող փաստացի ջրաքանակը հաշվառվում է հետադարձ ջուր փոխադրողի և օգտվողի համատեղ չափումների հիման վրա՝ ժամանակավորապես տեղադրված չափիչ սարքի միջոցով, մինչև այն կվերականգնվի և (կամ) կտեղադրվի օգտվողի կողմից:

12. Ցամաքուրդային (դրենաժային) համակարգերի շահագործող կազմակերպությունը պարտավոր է հաշվարկել ցամաքուրդի (դրենաժի) միջոցով փոխադրվող հետադարձ ջրերի ծավալի ու դրանց դիմաց վճարման ենթակա գումարի չափերը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ